ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ԳՀԱՊՁԲ-9/15-1

ք. Երևան «16» մայիսի 2018թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի պետի ՊԺԿ Կ. Կարապետյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև «Գնորդ», մի կողմից և **«ԷՍԶԵԹ ՖԱՐՄԱ» ՍՊԸ-ն՝** ի դեմս ընկերության տնօրեն **Ե. Սարգսյանի**, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ «Վաճառող», մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի,

2.1.8 Ընդունել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.4 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.4 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.4.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.5 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է ***11,243,540 (տասնմեկ միլիոն երկու հարյուր քառասուներեք հազար հինգ հարյուր քառասուն) ՀՀ դրամ***: ***Սույն պայմանագրի 2, 7, 8, 12, 13, 14, 15, 16, 18, 19 և 20-րդ անվանապտողերի մասով մասնակիցը վճարում է ԱԱՀ*** : Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը: Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 15 բանկային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան 2018թ. դեկտեմբերի 10-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված

վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից

բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 10 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.13 Սույն պայմանագով նախատեսված՝ Գնորդի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում **ՀՀ ԶՈՒ Ռազմաբժշկական վարչությունը:**

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	**«ԷՍԶԵԹ ՖԱՐՄԱ» ՍՊԸ**
ք. Երևան Բագրևանդի 5	**ք. Երևան, Տիգրան Մեծի 63/23**
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	**«Կոնվերս բանկ» ՓԲԸ**
Հ/Հ 900011144129	**Հ/Հ 1930000521940100**
ՀՎՀՀ 02522157	**ՀՎՀՀ 00433863**
ՀՀ պաշտպանության նախարարության	**տնօրեն**
ՆՏԱ դեպարտամենտի պետի ՊԺԿ	
Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ	**Ե. ՍԱՐԳՍՅԱՆ**

Հ/Հ Հաշվարկային հաշիվ AM 0296526

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Հ/հ	Ապրանքի անվանումը	Տեխնիկական բնութագիր	ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆԸ	ԱՐՏԱԴՐՈՂԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ԾԱԳՄԱՆ ԵՐԿԻՐԸ
1.	Ատամնաբուժական ասեղներ	Ատամնաբուժական ասեղներ, չափսերը 30G - 25մմ, 30G - 16մմ, 27G-36 մմ, պատրաստված բժշկական նշանակության պողպատից: Գործարանային փաթեթավորումով, տուփ N100	Tecnofar	Tecnofar	Իտալիա
2.	Ալգինատ	Ալգինատային չափսանյութ, ոչ պակաս քան 453գր, ստվարաթղթե վակումային փաթեթավորմամբ, առնվազն 5 օր կայունությամբ, մրգային համով, դեղին փոշի, բերանում գտնվելու ժամանակը նվազագույնը 40 վայրկյան: Շաղաղման ժամանակը՝ 35 վայրկյանից ոչ ավել: Ընդհանուր ժամանակը առնվազն 1 րոպե 50 վրկ.: Գործարանային փաթեթավորումով տուփ, N1	Zhermack	Zhermack	Իտալիա
3.	Ֆայլեր K-files, H-files	Չափսերը՝ N10, N15, N20, N25, N30, N35: Արմատախողովակը մշակելու համար: Երկարությունը՝ 25մմ, 31մմ: Գործարանային փաթեթավորումով տուփեր, N6: Պահանջվող քանակությունը մատակարարման ժամանակ բաշխել ըստ երկարությունների՝ հավասարաչափ:	NIC	NIC	Չինաստան
4.	Արմատալեցիչ	Արմատախողովակը լցոնելու համար: Երկարությունը՝ 25մմ, 29մմ: Կազմված է առանցքից և զսպանակից: Խիտ զսպանակը անմիջապես սկսվում է առանցքից և կլանում պուլսացիոն շարժման ուժը՝ մեծացնելով դիմացկունությունը: Լիցքանյութը բաշխում է հավասարաչափ և կանխվում է օդային պղպջակների առաջացումը: Պատրաստված է չժանգոտվող պողպատից, որն ապահովում է գերէլաստիկություն և փոքրացնում է կոտրվելու հավանականությունը: Գործարանային փաթեթավորումով տուփեր, N4: Պահանջվող քանակությունը մատակարարման ժամանակ բաշխել ըստ երկարությունների՝ հավասարաչափ:	NIC	NIC	Չինաստան
5.	Գեյց-գլիդեն	Արմատախողովակը ձևավորելու համար: Երկարությունը՝ 28մմ, 32մմ: Պատրաստված է չժանգոտվող պողպատից, որն ապահովում է գործիքի համաչափ ամրությունը: Կլորացված ծայրը բացառում է արմատանցքի պերֆորացիան: Հորիզոնական ուղղությամբ չափից ավելի ճնշման դեպքում շաղափը կոտրվում է ամենավերևի՝ առանցքին մոտ մասից: Գործարանային փաթեթավորումով տուփեր, N6: Պահանջվող քանակությունը մատակարարման ժամանակ բաշխել ըստ երկարությունների՝ հավասարաչափ:	NIC	NIC	Չինաստան
6.	Լարգո	Արմատախողովակը ձևավորելու համար: Երկարությունը 28մմ, 32մմ: Գործարանային փաթեթավորումով տուփեր, N6: Պահանջվող քանակությունը մատակարարման ժամանակ բաշխել ըստ երկարությունների՝ հավասարաչափ:	NIC	NIC	Չինաստան
7.	Արտիկուլացիոն թուղթ	Երկ մակերեսանի, հաստությունը 40 միկրոն, գործարանային փաթեթավորումով տուփ, N120	Coltene Whaledent	Coltene Whaledent	Գերմանիա
8.	Թղթե գամիկներ	Թղթե շտիֆտ, տարբեր համարների, գունային սանդղակով, հաստությունը՝ 15 - 40 չափի: Գործարանային փաթեթավորումով տուփ N 200:	Pearl Dent	Pearl Dent	Վիետնամ
9.	Պլոմբանյութ լուսակարծրացող	Հիբրիդային պլոմբանյութ - առնվազն 78 գր. տարայով, պարունակում է 16 ներարկիչ դենտինային 5 գր A2, B1, C2, D2 տեսակի, էմալային 5գր A1, A2, A3, A3,5 , B1, B3, C2, C3, D2, D3 տեսակների և կտրիչային 2,5 գր մեդիում լայթ պլոմբա , օրթոֆոսֆորական թթու առնվազն 3 գր, ապլիկատորներ առնվազն 50 հատ, բոնդ նվազագույնը 5 մլ. Պլոմբանյութը 76 տոկոսով (57 տոկոս) ծավալով բաղկացած է ոչ օրգանական բարիումական լցիչից 0.6 միկրոն մասնիկների չափով: Հավաքածուն փաթեթավորված է գործարանային տուփերով, N1	Kerr	Kerr	Իտալիա
10.	Արմատալիցք	Կոմպլեկտ՝ փոշի 15գր., բաղադրությունը՝դեքսամեթազոնի ացետատ, հիդրոկորտիզոնի ացետատ, պոլիօքսիմեթիլեն, թիմոլի յոդիդ հեղուկ- 15մլ, էվգենոլ: Գործարանային փաթեթավորումով տուփ, տուփում 1 լրակազմ:	PD	PD	Շվեյցարիա
11.	Կալցի հիդրոքսիդ	Ռենտգեն կոնտրաստային կալցիումի հիդրոքսիդի մածուկ - 2,5մլ քաշով, փաթեթավորումը՝ նախալցված ներարկչով, N1	PD	PD	Շվեյցարիա
12.	Սիլիկոն	Չափսանյութ՝ Ա-դասի, առաջին շերտ 1800 մլ, 4 տարրա առնվազն 450 մլ, պոլիվինիլսիլոքսանի հիմքով, գույնը՝ նարնջագույն, մշակման ընդանուր ժամանակը՝ առնվազն 2 րոպե, բերանում գտնվելը՝ առնվազն 3 րոպե 30 վայրկյան, պնդեցման ժամանակը՝ առնվազն 5 րոպե 30 վայրկյան, պնդությունը Շորով՝ 60, առաձգական վերականգնում՝ ավել քան 99,5%: Հավաքածուն փաթեթավորված է գործարանային տուփերով, N1	Zhermack	Zhermack	Իտալիա
13.	Սիլիկոն	Չափսանյութ՝ Ա-դասի, երկրորդ շերտ 100 մլ, 2 քարտրիջ 50 մլ, պոլիվինիլսիլոքսանի հիմքով, գույնը՝ մանուշակագույն, մշակման ընդանուր ժամանակը՝ առնվազն 1 րոպե 30 վայրկյան, բերանում գտնվելը՝ առնվազն 2 րոպե 30 վայրկյան, պնդեցման ժամանակը՝ առվազն 4 րոպե, պնդություն Շորով՝ 45, առաձգական վերականգնում՝ ավել քան 99,5%: Հավաքածուն փաթեթավորված է գործարանային տուփերով, N1	Zhermack	Zhermack	Իտալիա
14.	Անզգայացնող նյութ	Անզգայացնող նյութ՝ արտիկաինի հ/ք 40մգ, ադրենալինի հ/ք 0,012 մգ, 1,7 մլ տարողությամբ, տուփը պարանակում է 50 հատ փամփուշտ , փաթեթավորումը՝ մետաղյա, գործարանային տուփով N50	3M	3M	Գերմանիա

15.	Ռետրակցիոն թել	Ռետրակցիոն դյուսաձ բասբակյա, թել առնվազն 183 սմ երկարությամբ, թաթախված հացնարիկ էպինեֆրինի հիդրոքլորիդով, 0.089մգ/սմ և ցինկի ֆենոսոֆոնատով 0.157 մգ/սմ, գործարանային փաթեթավորումով տուփ, N8	Pascal	Pascal	ԱՄՆ
16.	Թերմոպլաստիկ չափսանյութ	Կծվացքի որոշման նյութ, փայտիկի տեսքով, առնվազն 113 գր, աշխատանքային ջերմաստիճանը՝ 50-51C: Անզգայացնող նյութ: Գործարանային փաթեթավորումով տուփ, N15	Kerr	Kerr	Իտալիա
17.	Ժամանակավոր ցեմենտ	Ժամանակավոր ցեմենտ էվգենոլ չպարունակող, ժամանակավոր շապիկների և կամուրջների ամրացման համար, լրակազմը պարունակում է առնվազն 50գ բազա և առնվազն 15գ ակտիվատոր: գործարանային փաթեթավորումով տուփ, N1:	Kerr	Kerr	Իտալիա
18.	Լաբորատոր նյութ ժամանակավոր շապիկների, կամուրջների պատրաստման համար	Նյութը ակրիլային, փոշի երեք տիպի՝ դեղին, միջին և բաց, յուրաքանչյուրը առնվազն 30 գրամ, բաղադրությունը՝ 55-60% պոլիմեթիլմեթակրիլատ, 30-40% կալցիում կարբոնատ, 1-2% բենզոիլ պերօքսիդ, 1% պիգմենտ արծաթի օքսիդի հիմքով հեղուկ երկու տիպի՝ սովորական և արագ կարծրացման, յուրաքանչյուրը առնվազն 30 մլ, բաղադրությունը՝ էթիլ մեթակրիլատ 98 %, N,N-դիմեթիլ P-թոլուիդին 1-2%: Գործարանային փաթեթավորումով տուփ, N1:	Kerr	Kerr	Իտալիա
19.	Թքածծիչ N100	Առաձգական, թեքվելու և ճկվելու հնարավորությամբ, գործարանային փաթեթավորումով տուփ, N100	Hefei Telijie	Hefei Telijie	Չինաստան
20.	Բիբ	Եռաշերթ դորշնուկներ՝ 2-ը թուղթ, 1-ը ցելոֆան, գործարանային տուփերով, N 500	Hefei Telijie	Hefei Telijie	Չինաստան
21.	Ռաբեր դամի համակարգ	Ռաբեր դամի գործիքների լրակազմ: Ներառում է. ռաբեր դամի դակիչ 160մմ, կլամպի աքցան 175մմ, ռաբեր դամի գերամուր շրջանակ ախտահանվող, կլամպների պատվանդան՝ իր կլամպաներով 9 հատ: Պատրաստված է ըստ նշանակության օգտագործման համար թույլատրելի մակնիշի բժշկական պողպատից: Էլաստիկություն՝ առնվազն 20.39կգ/մմ², կարծրությունն ըստ Ռոքվելի՝ 45-55 HRC, սահմանային կարծրություն 45-88 կգ/մմ²: Պարունակում է ռաբերդամի թաշկինակ 152x152 մմ +/- 2մմ չափի առնվազն 36 հատ, դակման ֆիքսատոր, ֆլոս ոչ պակաս քան 2մ:	Coltene Whaledent	Coltene Whaledent	ԱՄՆ
22.	Ատամնաբուժական էլևատորների հավաքածու	Ներառում է 1 բռնակ և 20 ծայրակալ: Պատրաստված են ըստ նշանակության օգտագործման համար թույլատրելի մակնիշի բժշկական պողպատից: Էլաստիկություն՝ առնվազն 20.39կգ/մմ², կարծրությունն ըստ Ռոքվելի՝ 50-58 HRC, սահմանային կարծրություն 66-77 կգ/մմ²: Գործիքները պարտադիր պետք է ունենան բազմակի ախտահանման հնարավորություն: Հավաքածուն փաթեթավորված է գործարանային տուփերով, N1:	Dentag	Dentag	Իտալիա
23.	Էնդոդոնտիկ քանոն	Մետաղական, նախատեսված մատի համար, երկարությունը 36 - 37մմ, 0.5մմ սանդղակով:	Guilin Woodpecker	Guilin Woodpecker	Չինաստան
24.	Սկելետի ծայրակալիկների հավաքածու	Varios 750 համակարգի անխափան աշխատանքի ապահովման համար նախատեսված հավաքածու, պարունակում է՝ G4, P1, V30, V-S51D, V-S52D ծայրակալները:	NSK	NSK	Ճապոնիա
25.	Ձեռքի սկելետների հավաքածու	Գրայսի սկելետների հավաքածու: Գունային տարբերակումով: Գործարանային տուփերով N12:	Dentag	Dentag	Իտալիա

Ապրանքները պետք է ունենան.

1. Արտադրողի միջազգային հավաստագրի /ISO, GMP, EC կամ այլ/ և /կամ/ արտադրող պետության կողմից տրված արտադրության անվտանգության և որակի վերահսկման հավաստագրի պատճեն:
2. Արտադրող կազմակերպության (կամ արտադրողի պաշտոնական ներկայացուցչի)՝ կողմից տվյալ ապրանքի համար տրված համապատասխանության և (կամ) որակի հավաստագիրը:
3. Մատակարարման ժամանակ ներկայացնել արտադրողին պետության կողմից տրված արտադրության անվտանգության և որակի վերահսկման հավաստագրի պատճեն և մատակարարված ապրանքատեսակների որակի սերտիֆիկատ:
4. Մատակարարման վայրը՝ ՀՀ ՊՆ 73014 զորամաս (ք. Աբովյան)

ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարության
ՀՀ պաշտպանության նախարարության
ՆՏԱ դեպարտամենտի պետի ՊԺԿ

Ա. ԱՎԱԳՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«ԷՍԶԵԹ ՖԱՐՄԱ» ՍՊԸ
տնօրեն

Ե. ՍԱՐԳՍՅԱՆ

ԱԳ 0296526

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿՑԱՅՈՒՅՑ

Հ/Հ	Ապրանքի անվանում	Չ/Մ	Քանակ	Միավորի գինը /ՀՀ դրամ/	Ընդհանուր գումար /ՀՀ դրամ/	Մատակարարումը՝ 2018թ. 3-րդ եռամսյակ
1.	Ատամնաբուժական ասեղներ	տուփ	80	1,680	134,400	80
2.	Ալգինատ	տուփ	15	1,992	29,880	15
3.	Ֆայլեր K-files, H-files	տուփ	500	780	390,000	500
4.	Արմատալեցիչ	տուփ	100	1,120	112,000	100
5.	Գեյց-գլիդեն	տուփ	100	2,490	249,000	100
6.	Լարգո	տուփ	100	2,490	249,000	100
7.	Արտիկուլացիոն թուղթ	տուփ	60	2,604	156,240	60
8.	Թղթե գամիկներ	տուփ	200	888	177,600	200
9.	Պլոմբանյութ լուսակարծրացող	տուփ	10	196,000	1,960,000	10
10.	Արմատալիցք	տուփ	15	13,900	208,500	15
11.	Կալցի հիդրոքսիդ	տուփ	20	8,900	178,000	20
12.	Սիլիկոն	տուփ	4	69,000	276,000	4
13.	Սիլիկոն	տուփ	6	15,600	93,600	6
14.	Անզգայացնող նյութ	տուփ	100	15,000	1,500,000	100
15.	Ռետրակցիոն թել	տուփ	15	4,404	66,060	15
16.	Թերմոպլաստիկ չափսանյութ	տուփ	3	9,900	29,700	3
17.	Ժամանակավոր ցեմենտ	տուփ	6	14,500	87,000	6
18.	Լաբորատոր նյութ ժամանակավոր շապիկների, կամուրջների պատրաստման համար	տուփ	2	28,500	57,000	2
19.	Թքածծիչ N100	տուփ	100	990	99,000	100
20.	Բիբ	տուփ	30	5,952	178,560	30
21.	Ռաբեր դամի համակարգ	հատ	12	174,000	2,088,000	12
22.	Ատամնաբուժական էլևատորների հավաքածու	տուփ	8	218,000	1,744,000	8
23.	Էնդոդոնտիկ քանոն	հատ	30	15,000	450,000	30
24.	Սկելետի ծայրակալիկների հավաքածու	հավաքածու	2	125,000	250,000	2
25.	Ձեռքի սկելետների հավաքածու	հավաքածու	4	120,000	480,000	4
Ընդամենը					11,243,540	

ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարության
ՆՏԱ դեպարտամենտի պետի ՊԺԿ

ԳԱՐԱՊԵՏՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«ԷՍՋԵԹ ՖԱՐՄԱ» ՍՊԸ
տնօրեն

Ե. ՍԱՐԳՍՅԱՆ

02956526

Հավելված N 2
N ԳՀԱՊՁԲ-9/15-1 պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Հ/հ	Ապրանքի անվանում	CPV կոդ	Ընդհանուր գումար /դրամ/	Նախատեսվում է ֆինանսավորել 2018թ., այդ թվում՝					
				հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	Դեկտեմբեր, բայց ոչ ուշ, քան 10.12.18թ.
1.	Ատամնաբուժական ասեղներ	33141193/3/10/5	134,400	134,400	134,400	134,400	134,400	134,400	134,400
2.	Ալգինատ	33141193/4/10/5	29,880	29,880	29,880	29,880	29,880	29,880	29,880
3.	Ֆայլեր K-files, H-files	33141193/5/10/5	390,000	390,000	390,000	390,000	390,000	390,000	390,000
4.	Արմատալեցիչ	33141193/6/10/5	112,000	112,000	112,000	112,000	112,000	112,000	112,000
5.	Գեյց-գլիդեն	33141193/7/10/5	249,000	249,000	249,000	249,000	249,000	249,000	249,000
6.	Լարգո	33141193/8/10/5	249,000	249,000	249,000	249,000	249,000	249,000	249,000
7.	Արտիկուլացիոն թուղթ	33141193/10/10/5	156,240	156,240	156,240	156,240	156,240	156,240	156,240
8.	Թղթե գամիկներ	33141193/13/10/5	177,600	177,600	177,600	177,600	177,600	177,600	177,600
9.	Պլոմբանյութ լուսակարծրացող	33141193/17/10/5	1,960,000	1,960,000	1,960,000	1,960,000	1,960,000	1,960,000	1,960,000
10.	Արմատալիցք	33141193/23/10/5	208,500	208,500	208,500	208,500	208,500	208,500	208,500
11.	Կալցի հիդրոքսիդ	33141193/24/10/5	178,000	178,000	178,000	178,000	178,000	178,000	178,000
12.	Սիլիկոն	33141193/27/10/5	276,000	276,000	276,000	276,000	276,000	276,000	276,000
13.	Սիլիկոն	33141193/28/10/5	93,600	93,600	93,600	93,600	93,600	93,600	93,600
14.	Անզգայացնող նյութ	33141193/29/10/5	1,500,000	1,500,000	1,500,000	1,500,000	1,500,000	1,500,000	1,500,000
15.	Ռետրակցիոն թել	33141193/32/10/5	66,060	66,060	66,060	66,060	66,060	66,060	66,060
16.	Թերմոպլաստիկ չափսանյութ	33141193/33/10/5	29,700	29,700	29,700	29,700	29,700	29,700	29,700
17.	Ժամանակավոր ցեմենտ	33141193/34/10/5	87,000	87,000	87,000	87,000	87,000	87,000	87,000
18.	Լաբորատոր նյութ ժամանակավոր շապիկների, կամուրջների պատրաստման համար	33141193/35/10/5	57,000	57,000	57,000	57,000	57,000	57,000	57,000
19.	Թքածծիչ N100	33141193/36/10/5	99,000	99,000	99,000	99,000	99,000	99,000	99,000
20.	Բիբ	33141193/37/10/5	178,560	178,560	178,560	178,560	178,560	178,560	178,560
21.	Ռաբեր դամի համակարգ	33141193/44/10/2	2,088,000	2,088,000	2,088,000	2,088,000	2,088,000	2,088,000	2,088,000
22.	Ատամնաբուժական էլևատորների հավաքածու	33141193/47/10/5	1,744,000	1,744,000	1,744,000	1,744,000	1,744,000	1,744,000	1,744,000
23.	Էնդոդոնտիկ քանոն	33141193/59/10/2	450,000	450,000	450,000	450,000	450,000	450,000	450,000
24.	Սկելետի ծայրակալիկների հավաքածու	33141193/60/10/4	250,000	250,000	250,000	250,000	250,000	250,000	250,000
25.	Ձեռքի սկելետների հավաքածու	33141193/62/10/4	480,000	480,000	480,000	480,000	480,000	480,000	480,000
Ընդամենը՝			**11,243,540**	**11,243,540**	**11,243,540**	**11,243,540**	**11,243,540**	**11,243,540**	**11,243,540**

*Վճարման ենթակա գումարները ներկայացված են ամբողջական դրամով

ԳՆՈՐԴ
ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարության
ՆՏԱ դեպարտամենտի պետի ՊԺԿ

Մ. ԴԱՆԻԵԼՅԱՆ

«ԷԱՉԵԹ ՖԱՐՄԱ» ՍՊԸ
տնօրեն

ՎԱՃԱՌՈՂ

Ե. ՍԱՐԳՍՅԱՆ

ԱՄ 0246526

Հավելված N 3
N ԳՀԱՊՁԲ-9/15-1 պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
_____	_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N _ եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված մատակարարումները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները ՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ մատակարարումների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 3.1
N ԳՀԱՊՁԲ-9/15-1 պայմանագրի

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն